Հետազոտականաշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտությանթեմա	Գրողի կենսագրության ուսուցման կազմակերպումը Թումանյանի օրինակով գրականության դասաժամերին միջին դպրոցում:
Ուսուցչիտվյալներ • Անուն, ազգանուն,հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ.հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	ԱնժելաՄանուկյան Հայոցլեզուևգրականություն 5-12 դդ
Ուսումնական հաստատությանտվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ.հասցե (տնօրենության) • Webկայքիհասցե	Ուրծաձորի միջնակարգ դպրոց Տիգրան Մեծի 30 (0234) 1-51 urtsadzor@schools.am

Բովանդակություն

Ներածություն	**3**
Հիմնականբովանդակություն	**7**
Եզրակացություններ,առաջարկություններ	**37**
Օգտագործվածգրականությանցանկ	**39**
Հավելվածներ	**40**

Ներածություն

Նպատակըեւ հետազոտականհարցը	Հետազոտության նպատակն է՝ • Ուսումնասիրել Հովհաննեսթումանյանի կյանքն ու գործունեությունը և նրա կենսագրության ուսուցումը միջին դպրոցում: Հետազոտական հարց՝ • Ի՞նչձևերով և հնարքներով կազմակերպել գրողի կենսագրության ուսուցումը գրականության դասաժամերին միջին դպրոցում
Ո՞րառանցքային կոմպետենցիային/կարող ունակությաննէ ուղղվածնպատակի ուսումնասիրությունը	Գրողիկենսագրությանուսումնասիրությունըուղղված է՝ լեզվական գրագիտություն,մշակութային կարողունակություն • Կենսագրության ազդեցությունը ստեղծագործությունների վրա: Աշակերտները կարող են ուսումնասիրել, թե գրողի կյանքում ինչ իրադարձություններ և փորձառություններ կարող են ազդել նրա գրական ստեղծագործության վրա: Սա կարող է ներառել ստեղծագործությունների կերպարների, սյուժեների և թեմաների վերլուծություն, որոնք կարող են ոգեշնչված լինել գրողի անձնական իրադարձություններից կամ զգացմունքներից:

Ներածություն

- Դարաշրջանի համատեքստ. Գրողի կենսագրությունը կարող է օգնել աշակերտներին հասկանալ այն ժամանակի համատեքստը, որտեղ նա ապրել և աշխատել է: Սա կարևոր է նրա ստեղծագործությունների սոցիալ-մշակութային և պատմական կողմերը վերլուծելու համար:
- Ոճ և տեխնիկա: Գրողի կենսագրության ուսումնասիրությունը կարող է օգնել հասկանալ, թե ինչ ներքին դրդապատճառներ, կրթությունն ու փորձը ձևավորեցին նրա գրելու ոճն ու տեխնիկան:
- Թեմաներ և շարժառիթներ: Կենսագրական վերլուծությունը կարող է օգնել բացահայտել գրողի ստեղծագործության մեջ ընթացող հետևողական թեմաներն ու մոտիվները և բացատրել, թե ինչու են դրանք կարևոր նրա համար:
- Հանրային պատկեր: Կենսագրության ուսումնասիրությունը կարող է նաև բացահայտել, թե ինչպես է գրողը ձևավորում իր կերպարը հասարակության մեջ և ինչ փոխազդեցություններ է ունեցել այլ գրողների, քննադատների և ընթերցողների հետ:
- Ազդեցությունը գրականության և մշակույթի վրա: Սովորողները կարող են

Ներածություն

	ուսումնասիրել, թե ինչպես է գրողի կենսագրությունն ազդել գրականության և ընդհանուր առմամբ մշակույթի զարգացման վրա, ինչպես է գրողը ձևավորել իր կերպարը հասարակության մեջ, ինչպիսի փոխհարաբերություններ է ունեցել այլ գրողների, քննադատների և ընթերցողների հետ:
Հետազոտությանթիրախայինխումբըևշրջանակը /քանակ, սեռայինբաշխում/	Հետազոտության համար թիրախային խումբ են հանդիսացել Ուրծաձորի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտները,10 տղա 15 աղջիկ
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝քանական հետազոտություն՝ հարցաթերթիկիմիջոցով, որակական հետազոտություն՝խորինհարցազրույցիմիջոցովեւայլն)	Հետազոտության համար կիրառվել են՝ • Մասնագիտական գրականության վերլուծություն • Պատմական մեթոդ • Անալիզ և սինթեզ
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	2023 թ սեպտեմբերի 4-25

Գրականությանակնարկ

- Մեջբերումներարդեն արված հետազոտություններից,
- Մեջբերումներ գրականությունից,տեղեկությանվստահելիաղբյուրներից:

Պարտադիրէկատարել հղումաղբյուրին

Հովհաննես Թումանյանի կյանքը

Հովհաննես ԹադևոսիԹումանյան՝հայմեծագույնգրողուբանաստեղծ, հասարակականգործիչ:Ծնվելէ 1869 թվականիփետրվարի 7-ին, ԼոռվաԴսեղգյուղում՝ հոգևորականիընտանիքում:

Նախնականկրթությունըստացելէհայրենիգյուղում, այնուհետևՁալալօղլուի (այժմյան՝Ստեփանավան) դպրոցում: 1883 թվականիցուսումըշարունակելէ ԹիֆլիսիՆերսիսյանՃեմարանում, սակայննյութականծանրիրավիճակիպատճառով 1887թ. ստիպվածեղավթողնելդպրոցըևսկսեցաշխատել Թիֆլիսիհայեկեղեցականդատարանում, այնուհետևՀայՀրատարակչականմիությանգրասենյակում (մինչև1893թ):[1]

ՀայոցպատմությանէջերումիրենցբազումսխրագործություններովհռչակվածՄամիկոնյաննախարարականտանմիճյուղը՝ Համազասպյանները X-XI դարերումՏարոնիցգաղթելևբնակությունենհաստատելԼոռումմասնավորապեսԴսեղումևնրաշրջակայքում:

Ըստ տոհմական ավանդության Թումանյանները սերել են Լոռու Մամիկոնյաններից: Այդ մասին պահպանվել են վավերագրեր: Թումանյանը նույնպես իրեն համարել է Մամիկոնյաններից սերված և 80-90-ականների նրա նամակների մի մասը կրում է «Հովհաննես Թումանյանց — Մամիկոնյան» կնքադրոշմը:

Նախքան գրական ասպարեզ մտնելը՝ 1887թ. Թումանյանը գրել է իր նախնիների բավական մանրամասն պատմությունը՝ «Գործք հարանց»

[1] Թամրազյան Հ., Հովհաննես Թումանյան, Բանաստեղծը և մտածողը, Երևան, 1995

վերնագրով: Այստեղ բանաստեղծը հիշատակում է իրենց տոհմական անունը՝ Տերսանք, նրանք աչքի էին ընկնում պատվասիրությամբ, վեհանձնությամբ, ռազմական ոգով և կենսուրախ բնավորությամբ:

Ավելի ուշ 90-ական թվականներին Թումանյանը կազմել է նաև իր տոհմի ճյուղագրությունը:Նախնիների «Վարքագրությունը» բանաստեղծը սկսում է իր ապուպապի հորից՝ տոհմի Նահապետ Բարխուդարից, որի ծննդյան տարեթիվն անհայտ է, ոչինչ չգիտեն նաև նրա գործերի մասին:

Տոհմի շառավիղն իբրև նահապետի համարվել է ավագ որդին:

Մեհրաբ (1740-1860)-ամուսնացել է ղազախեցի Ղազար քյոխվայի դստեր՝ Ծահրուբանի հետ: Նա խելացի, արթուն և արի նահապետ էր: Մեհրաբը եղել է Դսեղի գյուղապետը և կոչվել է «յուզբաշի»:[2]

Հովակիմ (Օվագիմ 1760-1855) – Քաջ ու հաղթանդամ Լոռու հայտնի իգիթներից մեկը: 18-րդ դարում, շնորհիվ իր քաջագործությունների նա մեծ հռչակ է ձեռք բերում: Խաչատուր Աբովյանն իր «Վերք Հայաստանի» վեպում տվել է Մեհրաբ և ՕվագիմՅուզբաշիների վիպական նկարագրությունը:

Հովհաննես աղա (Ուհանեզ 1795-1868)1826-1827 թթ. Ուհանեզ աղան ռուսական բանակում պարսկերենի թարգմանիչ էր,անվանի զինվորական, մասնակցել է մի շարք պատերազմների: Նրա թուրն այժմ էլ պահպանվում է Թումանյանի տուն-թանգարանում: Կռվում տարած քաջագործությունների համար ստանում է շքանշաններ ենթասպայի աստիճան: Բացի այդ նա մեծ աշխատանք է կատարել Հայաստանի

[2] Ինճիկյան Ա., Հովհաննես Թումանյան, Երևան, 1969

զանազան վայրերում ճանապարհներ կառուցելու համար:

Հովհաննես աղի կինը գեղեցիկ ու կիրթ կին էր. չէր սիրում գյուղի աշխատանքը: Նա ավելի էր սիրում քաղաքը և քաղաքային կյանքը: Նա է հետևել թոռան կրթությանը, նրա հագնվելուն, շարժուձևին, պահանջելով, որ ամեն ինչ մաքուր լինի: Թոռան անունը դրել է իր ամուսնու անունը՝ Օհաննես աղա: Եվ գյուղում այդպես էլ կոչում էին Թումանյանին՝ Օհաննես:[3]

Ասլան (1839-1898)- տոհմի շառավիղներից նշանավորը, բանաստեղծի հայրը: Սանահինի վանքում երկու տարի դպիրի պաշտոն վարելուց հետո, 1874-ին, հակառակ իր կամքի ձեռնադրվում է քահանա՝ Տեր-Թադևոս անվամբ: Նա վերին աստիճանի բարի, անձնվեր մարդ էր, զվարճախոս: Ունեցել է հասարակական գործչի ջիղ. նա եղել է նախաձեռնողը կամ մասնակիցը Դսեղիկրթալուսավորական գործերի: Նրա անունը հիշատակվում է գյուղի դպրոցի հոգեբարձուների թվում: Իր աշխարհիկ հակումներով քահանան աջակցել է հայրենի գյուղում թատերական ներկայացումներ կազմակերպելու գործին:

Սոնան՝ բանաստեղծի մայրը, ծագում էր Քոչարյանների տոհմից, նույնպես Դսեղցի: Նրա հայրն ու եղբայրները փորձված հովիվներ ու որսորդներ են եղել: Սոնան բարձրահասակ, գեղեցիկ, աշխատասեր կին էր: Իր բազմանդամ ընտանիքի հոգսերով ծանրաբեռնված՝ գիշերները ճախարակի առջև նստած՝ թել էր մանում, հետն էլ երգում էր արևելյան եղանակներ, ժամանակի տարածված ժողովրդական և հայրենասիրական երգեր: Լինելով զրույց սիրող և լավ պատմող կին՝ նա իր երեխաներին լեգենդներ, առակներ և հեքիաթներ էր պատմում, համեմած ժողովրդական ոճով և դարձվածներով:

Հովհաննեսից բացի, Սոնան և Տեր-Թադևոսը

[3] Ջրբաշյան Է., Թումանյան. ստեղծագործական պրոբլեմներ, Երևան, 1988

ունեցել են յոթ զավակ՝ չորս տղա և երեք աղջիկ:
Ռոստոմ — 1871-1915թթ.Վահան – 1881-1937թթ.
Աստղիկ – 1885-1953թթ.Իսկուհի – 1878-1943թթ.
Արշավիր — 1888-1921թթ.Արտաշես – 1892-1916թթ.
Օսան – 1874-1926թթ.

1888 թվականին, տասնինը տարեկան հասակում, Թումանյանն ամուսնանում է տասնյոթամյա Օլգա Մաճկալյանի հետ:<<1887 թ. սեպտեմբերի վերջերին ես ու ընկերուհիս՝ Օսանը գնացինք տատիս մոտ: Ճաշեցինք այնտեղ: Երեկոյան դուրս եկանք փողոց, որ մի նեղ ճանապարհ էր հին, միհարկանի տներով: Հենց տատիս տան կողքին, մի սենյակում ապրում էր մի ընտանիք՝ նախշքար (ներկարար) Բագրատ Թումանյանը՝ իր կնոջ հետ: Մենք այդ փողոցումն էինք, երբ այդ տնից դուրս եկավ մի միջահասակ կին, նրա ետևից՝ բարձրահասակ, նիհար կազմվածքով, գանգուր մազերով մի երիտասարդ: Կինը դիմեց մեզ.

-Չգնա՞նքնորակոչիկներինտեսնելու:Այն տարին հայերից նոր էին զինվոր հավաքում: Մենք հրաժարվեցինք ու եկանք տուն:[4]

Մյուս օրը, կեսօրին, երբ մեր տան պատուհանից դուրս էի նայում, տեսնեմ անցնում է մեր փողոցով նույն գանգուր մազերով տղան:Ըստ երևույթին, նա երեկ հետևել էր մեզ: Երրորդ օրը եկավ մեր տուն ձեռքին թղթեր, որ իրեն էր տվել կոնսիստորի անդամ Հովհաննես քահանա Մարտիրոսյանը: Ես թղթերը վերցրի, միմյանց նայեցինք, ժպտաց և գնաց: Հետո իմացա, որ կոնսիստորիայիգրագիրն է, լավ էլ ձեռագիր ունի:
Անուշկիտատս ինձ պատմեց, որ այդ տղային վաղուց գիտի, իր հարևանն է, հաճախ իր համար նամակներ է գրում. անունն Օհանես է և

[4] Ջրբաշյան Է., Թումանյան. ստեղծագործական պրոբլեմներ, Երևան, 1988

շատ է հավանում նրան: Դրանից հետո շարունակ գալիս էր, թղթեր բերում: Ծատ անգամ նրան մայրս էր ընդունում, ներս էր կանչում, խոսում էին, թղթերը թողնում էր ու գնում:
Հետո իմացա, որ մայրս, տեր Հովհաննեսի և Ներսես քահանա Աբովյանի հետ, առանց իմ գիտության, որոշել են մեզ նշանել և ամուսնությունից հետո Օհանեսին քահանա ձեռնադրել: Ներսես Աբովյանը (Օհանեսի ընկեր Անուշավան Աբովյանի հորեղբայրը) նույնպես կոնսիստորի անդամ էր:[5]

Մեր ծանոթությունը
1888 թ. հունվարի 1-ին առավոտյան մայրս մեր խոհանոցում մի ծիտ է տեսնում, բռնում է ու բերում սենյակ: Ծիտըդրինք վանդակում: Մայրս ասաց, որ դա լավ նշան է, Նոր տարվա բերած բախտը:
Երեկոյան Օհանեսը եկավ մեր տուն Նոր տարին շնորհավորելու: Մայրս ընդունեց նրան, բերեց սեղանատուն, սկսեցինք զրուցել: Օհանեսը հարցրեց.
-Էդ ի՞նչ ծիտ եք բռնել, տեսնենք ի՞նչ թռչուն է: Մայրս ցույց տվեց:
Օհանեսը մի երկու ժամ նստեց, խոսեցինք դեսից-դենից ու գնաց:
Մի քանի ժամանակ անց մայրս ասաց, որ ուզում են մեզ նշանել:
…Երկու ամսից մեզ նշանեցին: Հայրը՝ Տեր-Թադևոսը, եկավ գյուղից մի քահանայի և մի վարդապետի հետ: Մեզ մոտ էլ երկու քահանա կային, էնպես որ չորս քահանա և մի վարդապետ մեզ նշանեցին՝ 1888 թ. մարտի 24-ին :
Նշանվելուց հետո Օհանեսը համարյա ամեն օր մեզ մոտ էր լինում ճաշերին և գնում էր ուշ երեկոյան: Մի օր Զատկին եկավ, ինձ համար մի զույգ գեղեցիկ կոշիկներ բերեց, նոր ձևի: Կոշիկներից հետո առաջին նվերը, որ ստացել եմ իմ նշանածից, Հոմերոսի «Իլիականն» ու «Ոդիսականն» էին և «Վերք Հայաստանին»: Աբովյանի գիրքն ինձ ծանոթ էր արդեն, իսկ Հոմերոսը չէի կարդացել: Օհանեսն ինձ հետ

[5] Թումանյան Ն., Հուշեր ու զրույցներ, Երևան, 1987

կարդում էր և բացատրություններ տալիս: Օհանեսը գյուղից եկավ 1888-ի սեպտեմբերի 20-ին: Երկու ամսից, դեկտեմբերի 1-ին պսակվեցինք: Ես տասնյոթ տարեկան էի, Օհանեսը՝ տասնինը:[6]

…Անցավ մի քանի օր, մեր տանը նորից սկսեցին խոսել Օհանեսին քահանա ձեռնադրելու մասին: Ամեն օր ասում էին, որ գնա եկեղեցի և ժամերգություն սովորի, իսկ նա չէր գնում ու չէր ուզում: Մի տարվա մեջ Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում եղավ, բոլորից էլ դժգոհ էր. մի տեղ քահանաները կռվում էին, մյուս տեղը, թե՝ հեռու է և այլն: Վերջը ղրկեցին վանքի եկեղեցին: Այնտեղ էլ չմնաց: Մի առավոտ պարսավ գրեց թեմի առաջնորդ՝ Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանի վրա և դրանից հետո հեռացավ կոնսիստորի ծառայությունից…

Թումանյանի ստեղծագործական կյանքը

Թումանյանը սկսել է ստեղծագործել 80-ականներին կեսից, այդ ժամանակ էլ սկսում է համագործակցել հայկական տարբեր թերթերի հետ: Լայնածանաչում է ձեռք բերում «Բանաստեղծություններ» հավաքածուի (1-2 հատոր, 1890-92) լույս տեսնելուց հետո:[7]

Թումանյանի գրական գործունեությանը մեծ հայտնի շրջան է համարվում XIX դարի վերջին տասնամյակը – XX դարի սկիզբը: Այդ ժամանակաշրջանում է, որ Թումանյանը հանդես է գալիս որպես ժողովրդի ստեղծագործական ավանդույթների վրա հիմնված բանաստեղծ: Իր ստեղծագործություններից շա

[6] Թումանյան Ն., Հուշեր ու զրույցներ, Երևան, 1987
[7] Մկրյան Մ., Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Երևան, 1981

Հիմնականբովանդակությունը

տերումնանկարագրումէնահապետականօրենքներովապրողգյուղացիներիկյանքը, որըլիէներքինուհաճախողբերգականհակասություններով:ԱյդթեմայինենվիրվածԹումանյանի այնպիսիպոեմները, ինչպիսինեն «Մարոն» (1887, հրատարակվելէ 1892թ), «ԼոռեցիՍաքոն» (1889, հրատարակվելէ 1890թ), «Անուշ» ողբերգությունը (1890, հրատարակվելէ 1892թ):

Թումանյանիպոեմներից, բալադներիցուհեքիաթներիցշատերիհիմքումընկածէժողովրդականբանահյուսությունը:Օրինակ՝ «Թմկաբերդիառումը» հիմնվածէժողովրդականառասպելիվրա, ինչպեսնաև «Ախթամար», «Փարվանա», «ՍասունցիԴավիթ» պոեմները, «Միկաթիլմեղր» հեքիաթը:

1899 թվականինբանաստեղծընկազմակերպումէ «Վերնատուն» գրականխմբակը, որիանդամենդառնումբազմաթիվհայնշանավոր գրողներուբանաստեղծներ:

XX դարիսկզբինԹումանյանընհայտնիէդառնումնանա որպեսհասարակականգործիչ: 1905-07 թվականներինմասնակցումէԲաքվիհայ-թաթարականընդհարումներիհաշտեցմանը:Ցարական կառավարությանկողմիցերկուանգամձերբակալվումէ (1908 և 1911) ուբանտնետվում:

1912–1921 թթ.՝Հայգրողներիկովկասյանմիությաննախագահնէ:Հայաստանի խորհրդայնացումիցհետոդառնումէՀայաստանինօգնությանկոմիտեինախագահ (1921-22):[8] Թումանյանիստեղծագործականկյանքըսկսվեց 1881 թ. «Հոգուսիատոր…» գողտրիկբանաստեղծությամբնավարտվեց «Էսէ, որկա… ճիշտեսասում, թասըդբե՛ր» փայլունքառյակով՝ նվիրվածբժիշկԳրիգորՍաղյանին:

ԱյսերկուստեղծագործություններիմիջնընկածժամանակահատվածումձևավորվելէԹումանյանիհաշխարհը՝ անցնելովհասունացման, զարգացման, գաղափարականևհուզականսահմաններիհաստատմանուղի:

[8] Մկրյան Մ., Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Երևան, 1981

Հիմնականբովանդակությունը

Եղելենևատաղանդիդրսևորմանփայլունթռիչքներ, աստեղծագործականաշխատանքիդադարիպահեր, բայցերբեքկանգչիառելմտքիուհոգուներքինշարժումը, կյանքիիմաստիորոնումը, ինչընպայմանավորումէբանաստեղծիստեղծագործականուղումիասնականլինելը: Եվիհարկե, այդաշխարհիձևավորումըպայմանավորվածէրանձնականևհասարակականկյանքիմիշարքգործոններով: Բաժանելովայդուղինփուլերի՝ կարելիէբացահայտելդրազարգացմանտրամաբանությունը: ԱնվանիգրականագետԷդ. Ջրբաշյանըիր «Թումանյան. Ստեղծագործությանպրոբլեմներ» ուսումնասիրությանմեջ Թումանյանիգրականուղինբաժանելէվեցշրջանիըստթվականների.

ա/1881-1886 ,
բ/1887-1892,
գ/1893-1900,
դ/1901-1905,
ե/1906-1914,
զ/1915-1922:

Հիմնվելովայդտեսակետին՝համառոտներ կայացնենքբանաստեղծիստեղծագործականկյանքը փուլառփուլ:

1. 1881-1886 թթ.

ԱյսշրջանըընդգրկումէբանաստեղծիուսումնառությանտարիներընախՋալալօղլում, ապաԹիֆլիսիՆերսիսյանդպրոցում: Բացառելով «Հոգուսիատորի» անմիջականտողերը՝նշենքորայդժամանակահատվածումգրվածմեզհասածսակավաթիվբանաստեղծություններըկրումեն նախորդհեղինակներիթեմտքի, թեարտահայտմանձևերիազդեցությանկնիքը: Ա. Ինճիկյանիխոսքերովդա «առավելապեսկենսափորձիհարստացման, տպավորություններիկուտակման, զգացած-ապրածիիմաստավորման, որոնումներիշրջան» էր: ՊահպանվելենՋալալօղլումգրված «Օրորք»,

«Հայվաճառական»,

«Երբորկանցնիձմեռնսաստիկ…»

ևՆերսիսյանդպրոցումուսանելուտարիներին ս

	տեղծված «Նահապետիողբը», «Ինչո՞ւեստըխուր…»,«Թողփչեքամին» երգիեղանակով», «Մարշ», «Միխրատտաճկահայաստանցուն» սևագիրբանաստեղծությունները, որոնքիանդիսանումեն ավանդականպոետիկայ իանմիջականազդեցությանարտացոլում: Բայց դրանց հետ միաժամանակ գրվել են նաև «Ծունն ուԿատուն» և «Անբախտ վաճառականները» : Թումանյանը հետագայում գրել է. « Միժամանակ (1885-1887) էդ տեսակ բաներ, ժողովըրդական առակներ ու լեգենդներ շատ էի գրում բարբառով ու շատ էլ ունեի, բայց, որովհետև չէի պահում, դես դեն կորան, նրանցից մնացին «Ծունն ու Կատուն» և «Անբախտ վաճառականները»: Այս ստեղծագործություններում արդեն ի հայտ է գալիս նրա հետաքրքրությունը ժողովրդական բանահյուսության, ժողովրդական կենդանի լեզվի հանդեպ, ինչը հետագայում դարձավ Թումանյանի ստեղծագործության հիմնական հատկանիշներից մեկը: [9] Իհարկե, մինչ հրապարակումը այդ բալլադները ենթարկվել են մի շարք փոփոխությունների՝ կատարելության հասցնելով դրանք, բայց «թումանյանական որակն ստեղծվել է հենց սկզբից» (Լ.Հախվերդյան): 2. 1887-1892 թթ.

[9] Մկրյան Մ., Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունը, Երևան, 1981

Հիմնականբովանդակությունը

Սա հասարակության առջև հանդես գալու և ճանաչման շրջանն է: Առաջին հրապարակումները («Նոր-Դար» լրագրում) անստորագիրէին. «Գրասեր պատանին, ըստ երևույթին, դեռ վստահ չէր իր ստեղծագործական ուժերի և կոչման նկատմամբ, ուստի և վախենում էր բացահայտորեն հանդես գալ հասարակության առջև»(Էդ. Ջրբաշյան): Բայց շուտով նա՝ լսելով ընկերներին , հասարակության դատին է հանձնում իր ստեղծագործությունների առաջինժողովածուն: 1890 թ. Մոսկվայում տպագրվում է Թումանյանի «Բանաստեղծությունների» առաջին հատորը, իսկ 1892 թ. լույս է տեսնում նաև երկրորդը. Մի շարք քնարական բանաստեղծություններ, վեց պոեմ («Լոռեցի Սաքոն», «Մեհրի», «Ալեք», «Մերժած օրենք», «Անուշ», «Մարոն»), երեք բալլադ («Արև և Լուսին», «Ծունն ուԿատուն», «Ախթամար»), թարգմանություններ: Թումանյանի բանաստեղծությունները սկսում են տպվել նաև պարբերական մամուլում. նախ «Մուրճում», ապա «Տարազ» և «Հորիզոն» գրական հանդեսներում: Այս շրջանը նշանավորված է ստեղծագործական որոնումներով, ազդեցությունների հաղթահարմամբ, ինքնուրույն ոճի և ձևիհստակեցմամբ: Թեև ինքը բանաստեղծը՝ գնահատելով իր առաջին գրքի երկերը, ասում է, որ դրանք «անմշակ են և սկզբնական ձևի մեջ», սակայն նրանց մեջ

	երևում են հասուն Թումանյանի մտքերի, խոհերի, պատկերների, ստեղծագործական ձևերի նախնական արտահայտությունները: 3. 1893-1900 թթ. Ընդգրկում են երրորդ շրջանը, որ պայմանականորեն կարելի է անվանել «նախապատրաստական»՝ հաջորդ փուլում կայացած ստեղծագործական մեծ թռիչքից առաջ: Եթե դատենք տպագրված նյութերի քանակով, ապա այս շրջանը հարուստ չէ. «Դաշնակներ» փոքրիկ ժողովածուն (1893 և 1896 թ.թ.), «Աղբյուր» ամսագրի մատենաշարի գրքույկը, «Լոռեցի Սաքոյի» վերամշակված տարբերակը, թարգմանություններ Բայրոնից և Լերմոնտովից, հրապարակումներ պարբերական մամուլում՝ մոսկովյան ժողովածուի խոստումնալից մուտքից հետո, այնքան էլ առատ չէ: Բայց այս թվացյալ դադարը իրականում լարված որոնումների և աշխատանքի շրջան էր, ինչի արդյունք եղավ ստեղծագործական այն զարգացումը, որն ի հայտ եկավ դարասկզբի նվաճումներում: Նա շարունակել է աշխատել մի շարք պոեմների վրա, գրել է բալլադներ («Անիծած հարսը», «Պողոս-Պետրոս», «Արծիվն ու Կաղնին»), ստեղծում է գեղարվեստական արձակի փայլուն նմուշներ («Գիքորը», «Աղքատի պատիվը», «Քաջերի կյանքից», «Արջառոս» և ուրիշ պատմվածքներ, «Անխելք մարդը» հեքիաթը), հանդես է գալիս որպես հրապարակախոս («Բորչալվում»), տպագրում է իր առաջին

գրական-քննադատական հոդվածներն ու ելույթները: [10]

90-ական թվականներին են վերաբերում Թումանյանի դրամատուրգիական փորձերն, որոնք, անշուշտ, մեծ աշխատանք էին պահանջում, բայց և այնպես այդպես էլ չավարտվեցին և չտպագրվեցին:

1895 թվականից նա սկսում է նյութեր հավաքել իր ստեղծագործական ամենամեծ երազանքը իրականացնելու նպատակով՝«Հազարան բլբուլ» հեքիաթ-պոեմի համար:

4. 1901-1905 թթ.

Այս կարճատև ժամանակաշրջանը Թումանյանի ստեղծագործական կյանքի բարձրակետն է: [11]

Լ. Հախվերդյանը գրում է. «Թե ով էր Թումանյանը՝ երևաց 1903-ին, երբ լույս տեսավ նրա «Բանաստեղծություններ» գիրքը բովանդակությամբ ամենահարուստ, արվեստով ամենաբարձր, հրատարակությամբ ամենաշքեղ գիրքը, որ երբևէ տպագրվել է հեղինակի կենդանության օրոք: Բյուրեղացումն այն ամենի, ինչ ստեղծել էր Թումանյանը 1882-ից ի վեր»: Բարեկամների շնորհիվ Թումանյանը հնարավորություն ստացավ հանգստանալու, բուժվելու և աշխատելու Աբասթումանում և ուրիշ ամառանոցային վայրերում: Այդ լարված և ոգեշունչ աշխատանքի արդյունքն էին վերամշակված և

[10] Հայ գրականության պատմություն, հատոր 5-րդ, Երևան, 1984
[11] Հայ գրականության պատմություն, հատոր 5-րդ, Երևան, 1984

	կատարելության հասցրած «Անուշը», «ԼոռեցիՍաքոյի» երրորդ և «Մարոյի» երկրորդ տարբերակները, «ՊոետնուՄուսան»,«Դեպի Անհունը» , «Սասունցի Դավիթը», «Թմկաբերդիառումը», «Փարվանան», քնարերգության մի շարք փայլուն նմուշներ, որ զետեղվեցին վերը նշված 1903 թ. ժողովածուի մեջ՝ հրատարակված իշխանուհի Մարիամ Թումանյանի կողմից: Թումանյանը հասակով մեկ կանգնեց հայ գրականության մեջ իր ստեղծագործությանը բնորոշ բոլոր կողմերով. Ազգային և համամարդկային, արդիական և հավերժական, դրամատիզմով հագեցած և երգիծական: Կատարելության հասցրեց իր ոճը՝ պարզ, սեղմ և փիլիսոփայական խորությամբ հագեցված, հյութեղ և հարուստ լեզվով: Այս շրջանում ձեռքբերված նվաճումներով են պայմանավորված Թումանյանի ստեղծագործական կյանքի հետագա փուլերը: 5. 1906-1914 թթ. «Այս շրջանի ժամանակագրական սահմանները որոշվում են ոչ այնքան ստեղծագործական, որքան հասարակական-քաղաքական իրողություններով, առաջին ռուսական հեղափոխությունից մինչև համաշխարհային պատերազմի սկիզբը» (Էդ. Ջրբաշյան): Թումանյանի հասարակական ճանաչման հաստատման նոր նվաճումը եղավ 1908 թ. Բաքվում տպագրված «Բանաստեղծություններ» ժողովածուն: Բացի

Հիմնականբովանդակությունը

	դրանից, այս շրջանում բանաստեղծը հանդես եկավ իր մանկական ստեղծագործություններով, որոնք տպագրվեցին «Հասկեր» մանկականհանդեսում, «Լուսաբեր» դասագրքում և իշխանուհի Մարիամ Թումանյանի հրատարակած« Հովի. Թումանյանի մանկական գրադարանը» մատենաշարի գրքույկներում: Թումանյան-մանկագիրը մեկընդմիշտ մտավ յուրաքանչյուր հայ երեխայի հոգումեջ՝ դեռ թոթովախոս հասակից: Ուսումնասիրելով Թումանյանի գրական ուղին այդշրջանում՝ նկատում ենք քնարական ստեղծագործությունների նվազումը՝ մոտ երկու տասնյակ բանաստեղծություն, որոնց թվում են թումանյանական քնարի փայլատակումներ. «Վայրէջք», «Ծագումն», «Գարնանհրավեր», «Տաղով եկավ…», «Թեպետև և բախտը մեզ շատ հարվածեց» և այլն: Բացի դրանից, Թումանյանն այս շրջանում հանդես չեկավ իր սիրված ժանրով՝ պոեմով: Նա գնաց ժողովրդական ավանդությունների և գրականաղբյուրների մշակման և նոր իմաստավորման ճանապարհով, ստեղծելով այդ ժանրի իսկական գոհարներ. «Մի կաթիլ մեղրը», «Աղավնու վանքը», «Չարի վերջը», «Հսկան», «Էսպես չի մնա» և այլն: Այդ տարիներին Թումանյանի ստեղծագործության մեջ գերակշռում է գեղարվեստական արձակը:

Հիմնականբովանդակությունը

Ձևավորելով իր սեղմ և հստակ ոճը՝ նա կատարելության է հասնում թե՛ պատմվածքներում, թե՛ իր հեքիաթներում, թե այլ ժողովրդների հեքիաթների թարգմանություններում: Թվենք մի քանիսը. «Գիքորի» և «Արջաորսի» վերամշակված տարբերակները, «Իմ ընկեր Նեսոն», «Քեռի Խեչանը», «Եղջերուն» և ուրիշ պատմվածքներ; «Քաջ Նազարը», «Տերն ու Ծառան», «Կիկոսի մահը», «Սուտասանը», «Բարեկենդանը», «Կացին ախպերը», «Սուտլիկ որսկանը» և այլն: Այս շրջանում է Թումանյանը գրել նաև իր հրապարակախոսական և քննադատական հոդվածների մեծ մասը, որոնք տպագրվում էին 1909 թ-ից հրատարակվող «Հորիզոն» լրագրում: Իր ելույթներում Թումանյանը արձագանքել է հասարակության առջև ծառացած գրեթե բոլոր խնդիրներին՝ դիպուկ և խոր ու թափանց մեկնաբանելով դրանք: Գրականության, թատրոնի, բանահյուսության, պատմության, գիտության վերաբերյալ նրա դատողությունները այսօր էլ արդիական են:[12]

6. 1915-1922 թ.թ.

Թումանյանի կյանքի և ստեղծագործության վերջին շրջանն է: Այդ տարիներին բանաստեղծի կյանքը առավել քան երբևէ սերտորեն կապված էր իր ժողովրդի պատմական ճակատագրի հետ: Առաջին համաշխարհային պատերազմը, Մեծ եղեռնը, հեղափոխությունը,այդ տարիների նրա

[12] Հայ գրականության պատմություն, հատոր 5-րդ, Երևան, 1984

Հիմնականբովանդակությունը

անձնուրաց բուռն հասարակական գործունեությունը, իր անձնական ողբերգությունը. որդու՝ Արտավազդի և երկու եղբայրների մահը, անցան բանաստեղծի սրտի միջով և արտացոլվեցին նրա ստեղծագործության մեջ: Իր մտորումները հայ ժողովրդին բաժին հասած դաժան փորձությունների, նրա պատմական անցյալի, ներկայի, իր հավատը նրա լուսավոր ապագայի վերաբերյալ Թումանյանը կիսեց ընթերցողների հետ մի շարք հրապարակախոսական հոդվածներում և ելույթներում. «Վան և Երևան»… Նշված ժամանակահատվածում չափածո և արձակ էպիկական տեսակները պակասում են՝ զիջելով քնարերգությանը: 1916 թ. լույս տեսավ «Հայրենիքիս հետ» ժողովածուն, որտեղ զետեղվեցին ինչպես նախորդ տարիներին գրված, այնպես էլ նոր բանաստեղծություններ՝ հայրենասիրական քնարերգության անկրկնելի էջեր.«Մեր ուխտը», «Հայոց լեռներում», «Տրտմության սաղմոսներից», «Հայրենիքիս հետ», «Վերջին օրը», «Հոգեհանգիստ»: Նշենք նաև հոգում պարփակվածը, կյանքի ու մարդու մասին խոհերը բացահայտող «Բարձրից»-ը, «Պատրանքը», «Տիեզերքի ընթերցումը», «Սիրիուսի հրաժեշտը», և իհարկե, բանաստեղծի «հոգու կենսագրությունը» ամփոփող քառյակները – նրա ողջ գրական կյանքի զարգացման փառահեղ պսակը: 1916-1922 թթ. Թումանյանը գրեց հիսունից

ավելի քառյակ: [13]

ՀՈՎՀ.ԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՈՐԲԱԽՆԱՄ ԳՈՐԾԸ

Հայ ժողովրդի պատմական ծանր և բացառիկ ճակատագիրը խորը հետք է թողել հայ գրողների, մշակույթի գործիչների և ընդհանրապես մտավորականության կենսագրության վրա: Պատճառներից մեկը թերևս այն է, որ հայրենասիրությունը նրանց համար եղել է կենսակերպ: Հայոց մեծերն իրենց կենսագրության և ստեղծած արժեքների վրա կրում են հայրենի դժվարին պատմության կնիքը՝ սկսած Խորենացուց ու Եղիշեից, մինչև միջնադարյան տաղերգուներ, մինչև Աբովյան, Ռաֆֆի և ուրիշներ: Սակայն այս ոսկեղենիկ շղթայում առանձնահատուկ է Հովի. Թումանյանի զբաղեցրած տեղը՝ իր անձնական կյանքով և ստեղծագործությամբ: Եթե իրոք ժողովուրդը կարողանում է ծնել այնպիսի բացառիկ զավակներ, ովքեր իրեց հարազատ ժողովրդի ճակատագրական, օրհասական պահերից դեռ շատ առաջ, միայն իրենց հայտնի եղանակներով՝ նյարդերով, արյունով, մաշկով և վերջապես հոգու աչքերով կարողանում են տեսնել արհավիրքը, ապա Թումանյանը մեկն էր այդ հազվագյուտ տեսանողներից, ամենատեսներից: Նա էր, որ դեռ 1913 թ. գրում էր. «…թուրքերը հայկական հարցը վճռելու են

[13] Ինճիկյան Ա., Հովհաննես Թումանյան, Երևան, 1969

բնաջնջումով և թուրքը նրան բաց պիտի թողնի միայն վերջին շնչի հետ… Թուրքիան կդիմի ամենահրեշավոր միջոցներին՝ վերջ դնելու հայ ժողովրդին իր հարցի հետ միասին»:

Ապագա հանճարեղ բանաստեղծը դեռ վաղ պատանեկան տարիներից արդեն համակված էր ազգային վշտով և ազատագրական գաղափարներով: Այլապես ինչը պիտի ստիպեր ընդամենը 15 տարեկան պատանուն գրել այսպիսի տողեր.

Ինչու՞ ես տխուր

Թշվառ Հայաստան
Է՞ր է վիզդ ծուռ
Մայր իմ սիրեկան,
Խոցալից սրտով
Մայր իմ Հայաստան:[14]

Թումանյանն ինքն ընտրեց իր ճանապարհը՝ ամբողջ ներաշխարհով, հոգով-սրտով կապվելով հարազատ ժողովրդի ճակատագրին, նրանից այլևս չբաժանվելու պայմանով: Եվրոինաչափորեն էլ նրա ստեղծագործական ոգու բռնկումներն էլ համընկնում են հայ ժողովրդի ազգային կյանքի համեմատաբար բարենպաստ ժամանակներին: Սակայն, դժբախտաբար մեծ գրողը ստեղծագործական կյանքի ընթացքում երջանիկ շրջափուլեր քիչ է ունեցել: Նա գրիչը փոխարինեց ճերմակ դրոշակով՝ արյունալի ընդհարումներին վերջ

[14] Ինճիկյան Ա., Հովհաննես Թումանյան, Երևան, 1969

դնելու առաքելությամբ:

1914 թ., երբ պայթեց առաջին համաշխարհային պատերազմը, հայ ժողովրդին և նրա բանաստեղծ զավակին սպասում էին էլ ավելի զարհուրելի, դժոխային ժամանակներ: Թումանյանն այդ օրերին ընտանիքի, հարազատների և մտերիմների հետ գտնվում էր Ձաղվերում: Նա շուտափույթ վերադառնում է Թիֆլիս և անդամակցում 1914 թ. հոկտեմբերին ստեղծված «Պատերազմից վնասվածներին օգնող կոմիտե»-ին: Եվ այսպես շարունակաբար Թումանյանը պիտի իրականացներ հայրենիքին ծառայելու իր առաքելությունը:

Հոգու ամենանուրբ և ամենասուրբ թելերով կապված լինելով իր ժողովրդին, բանաստեղծը հիրավի դարձավ այն հազվագյուտ կանխատեսողներից մեկը, որը դառնորեն գուշակեց հային բաժին պահված պատմության եղերական էջերից մեկը. Օսմանյան Թուրքիայի կողմից 1915 թ. իրականացված Մեծ Եղեռնը: Երբ Թիֆլիս հասավ կոտորածի լուրը, Թումանյանը հիվանդ, հոգեպես և ֆիզիկապես քայքայված, դստեր՝ Նվարդի հետ մեկնեց Էջմիածին՝ սեփական ձեռքերով հոգալու գաղթականության խնամքի խնդիրները: Թումանյանին ավելի լավ ոչ ոք չի կարող ներկայացնել այդ օրերի մղձավանջը. «Դա մի պատսպարան էր, ուր հավաքվում, լցվում էին սովամահի ճանկերից խլած երեխաներ… Ահա

հազարավոր մայրերի ոսկրացած բազուկների ու ձեռների անտառը…, որ ամեն կողմից առաջ էին հրում անթիվ, անհամար մանկական կմախքներ, որ դեռ շնչում էին…»: Այս ամենը մտովի պատկերացնելն անգամ այսօր սահմռկեցուցիչ է, իսկ ի՞նչ էր զգում բանաստեղծի հոգին… Կա մի հայտնի լուսանկար, որ ցուցադրվում է Թումանյանի թանգարանում՝ «Թումանյանը և իր դուստր Նվարդը որբերի հետ Էջմիածնում, 1915 թ.», որտեղ բանաստեղծն ընդամենը քառասունվեց տարեկան է, բայց նման է պատկառելի ծերունու… Մեկնաբանություններն ավելորդ են:

Թումանյանը, ժամանակ չկորցնելով, առանց քուն ու դադարի ձեռնամուխ է լինում գաղթականների և որբերի ապաստարանի, խնամքի, նրանց սնունդով ապահովելու գործին: Նրա անմիջական ղեկավարությամբ բացվում է հինգ հիվանդանոց՝ հինգ հարյուր մահճակալով, որբանոց՝ մոտ երեք հազար երեխայիհամար:

Երեխաներից շատերը նրան հայրիկ էին անվանում: Թումանյանի գրառումներից. «Երեխաներից ոմանք էնպես են սովորել, որ ճաշելուց հետո էլ փեշերս բռնում են (թեև հագնված են, պատսպարված և կերակրված) հայրիկ ես որբ եմ, նա հեր ունեմ, նա մեր» : «…Որ ասում էին նոր շորեր պիտի կարենք ձեզ համար, էստեղից-էնտեղից գլուխ էին

բարձրացնում. –Հայրի՛կ, ինձ համար կարմիր հալավ կարեցե՛ք…»

Շատ հուզիչ և ուշագրավ են Թոթովենցի հուշերը. «Թումանյանը վազում էր կետից կետ, վրանից վրան… մի մեռնողից դեպի ուրիշ մեռնողը: Կարգադրում էր, հրամայում, հայհոյում, կշտամբում, ժպտում, շոյում, զայրանում: Մի օր էլ, տեղատարափ անձրևին, նա վազեց, բռնի կերպով բաց արավ նոր կառուցվող հայրապետական վեհարանը, որը մինչ այդ անձեռնմխելի էր: Գաղթականները լցվեցին ներս: Զայրացած կաթողիկոսը կշտամբում է պոետին, ասելով. –Ինչպե՞ս եք համարձակվել, չէ՞ որ Ձեզ հետ խոսում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը… Թումանյանը պատասխանում է.-Բայց Ձեզ հետ էլ խոսում է Ամենայն Հայոց Բանաստեղծը»: Սա թերևս ամենամեծ գնահատականն է, որին ակամա արժանացրել է ինքն իրեն բանաստեղծը:

Թումանյանը մեծ ջերմությամբ ու երախտագիտությամբ է մտաբերում, այդ մղձավանջային օրերին, անսահման անձնվիրությամբ որբախնամ գործին նվիրված հայ կանանց: «…Հիշում եմ էն մանկական կմախքների խիտ-խիտ ու երկար շարքերը, երբ կերակրելու համար նստեցնում էին վերահսկող տիկիններն ու օրիորդները, որոնք ազատարար ոգիների նման, անդադար պտտվում էին նրանց վրա, ոտից գլուխ ճերմակ վերնաշապիկներ հագած, ցավից ու անտանելի ծանր օդից ու հոտից գունատված,

դալկացածտիկիններն ու օրիորդները…»:[15]

Այդ պահապան հրեշտակների թվում էր նաև Թումանյանի դուստրը՝ Նվարդը, որն արհամարհելով ամեն մի դժվարություն, կյանքին սպառնացող վտանգը (քիչ չէր գաղթականության մեջ մոլեգնող համաճարակային հիվանդություններից մահացող գթության քույրերի թիվը) անձնվիրաբար ծառայում էր իր ժողովրդի փրկության գործին: Եղբորը՝ Արտիկին գրած նամակից. «Հայրիկն ու ես պատրաստվում ենք, հիմա գնալու ենք Երևան: Որբանոցի երեխաներից հարյուր քսանհինգ հոգի պիտի փոխադրել Երևան, քառասուներեք ծծկեր երեխա կա, պահող չկա: Գաղթականներն արդեն ցրվում են. որբերը նորից շատացել են… Ճեմարանը հիվանդանոց են դարձրել: Հայրիկը շատ գոհ է… հոգնել է, բայց գործը կիսատ թողնել չի կարող»:

Հայրենասեր բանաստեղծի զավակները միմյանց չէին զիջում իրենց նվիրվածությամբ ու հայրենիքի ճակատագրի մտահոգությամբ: Ավագ որդին՝ Մուշեղն էլ ահազանգում էր Իգդիրից, որտեղ ընթանում էին պատերազմական գործողություններ: Նա նամակներից մեկում գրում է, որ որբ հայ մանուկներին կազակներն իրենց մեջ էին բաժանում, և դա կարծես արդեն սովորական երևույթ էր դարձել: Նա սրտի ցավով գրում է. «…Երեխաներին որդեգրում են և ռուսացնում…

[15] Ինճիկյան Ա., Հովհաննես Թումանյան, Երևան, 1969

Հիմնականբովանդակությունը	Հայ ազգը ուրիշ տեսակ զոհաբերության առաջ է կանգնած, մի նոր տեսակի թալանի առաջ է կանգնած, երեխաների թալա~ն…»: Ամենայն Հայոց Բանաստեղծի զավակներն այլ կերպ մտածել ու գործել չէին կարող:[16]
Հետազոտությանընթացքը	Միջին դպրոցումգրականությանդասերինգրողիկենսագրությանդասավանդումըկարող է կազմակերպվելտարբերձևերով և տեխնիկայով, որպեսզիդասըհետաքրքիր և բովանդակալիցլինիաշակերտներիհամար: Ահադրանցիցմիքանիսը. ❖ Պատմությունկյանքի և ստեղծագործությանմասին. Դասըսկսեքգրողիկյանքի և ստեղծագործությանմասինպատմվածքով: Պատմությունըկարողեքօգտագործելպատմվածքիկամնկարազարդումներովներկայացմանտեսքով: ❖ Ստեղծագործություններիկենսագրական վերլուծություն:Գրողիկենսագրությունըներկայացնելուցհետոկատարեքնրամեկկամմիքանիստեղծագործություններիվերլուծություն՝ ընդգծելովտարրեր,

[16] Ինճիկյան Ա., Հովհաննես Թումանյան, Երևան, 1969

Հիմնականբովանդակություն

	որոնքկարողենոգեշնչվածլինելհեղինակ իկյանքիիրադարձություններիցկամփորձ առություններից: Օգտագործելովպատկերներ. ցույցտվեքաշակերտերինգրողիլուսանկա ներնուդիմանկարները, այնվայրերը, որտեղնաապրել է, և պահերիրկյանքից: Սակօգնիձերկենսագրությունը ավելիտես ողականդարձնել: ❖ Կարևորիրադարձություններիդիտարկում. Առանձնացրե՛քգրողիկենսագրությանհիմ նականիրադարձությունները և բացատրե՛ք, թեինչպեսենդրանքազդելնրաստեղծագո րծությանվրա: Սակարող է լինելընտանեկանիրադարձություններ, կրթություն, ճանապարհորդություն և այլկարևորպահեր: ❖ Համեմատությունժամանակակիցիրադա ռձություններիհետ. Փորձեքկապերհաստատելգրողիկյանքի և նրակենդանությանօրոքտեղիունեցածպ ատմականիրադարձություններիմիջև: Սակօգնիաշակերտներինավելիլավհասկ անալնրաաշխատանքիենթատեքստը: ❖ Դերախա:Խնդրեքաշակերտներինդերակ ատարելգրողիկյանքիկամստեղծագործու թյանտարբերկերպարներ: Սակարող է օգնելնրանցավելիլավընտելանալիրավի

Հիմնականբովանդակությունը

	ճակին և ավելիլավիասկանալկենսագրությունը: ❖ Քննարկում և վերլուծություն. Ավարտեքդասըկենսագրական և գրականասպեկտներիքննարկմամբ և վերլուծությամբ: Ամփոփեք և խնդրեքաշակերտներինարտահայտելիր ենցկարծիքըգրողիկյանքիազդեցությանմ ասինիրստեղծագործությանվրա: ❖ Տնայինաշխատանք: Աշակերտներինհանձնարարեքավելիման րամասնուսումնասիրելգրողիկենսագրությունը և պատրաստելկարճներկայացումկամշարադրություն: ❖ Հյուրերիդասախոսություններ. Հրավիրեքգրականագետինկամփորձագետինհրավիրյալդասախոսությունկարդալ ուգրողիկյանքի և գործունեությանվերաբերյալ: ❖ Հետազոտականնախագիծ:Հանձնարարեքաշակերտներին հետազոտությունանցկացնելգրողիկենսագրությանկարևորկողմերիվերաբերյալ և արդյունքներըներկայացնելդասարանում: Կարևոր է հաշվիառնելաշակերտներիհետաքրքրությունները և պատրաստվածությանմակարդակը՝ գրողիկենսագրությանդասընրանցհամա

Հիմնականբովանդակությունն

	ռինարավորինսմատչելի և հուզիչդարձնելուհամար: Թումանյանի կենսագրության ուսուցումը կատարվում է 8-րդ դասարանում: (Հավելված 1) Այս ծրագրի շրջանակներում անցկացվող դասի ընթացքում աշակերտները կարող են արտահայտվել հետևյալ կերպ և ձեռք բերել տարբեր հմտություններ և գիտելիքներ: Դա նրանց թույլ կտա զարգացնել ասոցիատիվ մտածողությունը և արտահայտչական հմտությունները: Թումանյանի կենսագրության և ստեղծագործության ուսումնասիրություն:Աշակերտները կծանոթանան Հովհաննես Թումանյանի կյանքին և գործունեությանը, ինչը թույլ կտա ընդլայնել իրենց մտահորիզոնը և հասկանալ պատմամշակութային գործիչների կարևորությունը: Խմբային աշխատանք: Դասարանը խմբերի բաժանելը և յուրաքանչյուր խմբի ներսում հարցերի քննարկումն օգնում է զարգացնել թիմային աշխատանքի, հաղորդակցման և փոխազդեցության հմտությունները: Տեղեկատվության վերլուծություն և գնահատում:Աշակերտները կվերլուծեն Թումանյանի մասին տեղեկատվությունը, նրա

Հիմնականբովանդակությունը	ազդեցությունը գրականության և մշակույթի վրա, ևկարտտահայտենիրենց կարծիքը այս հարցի վերաբերյալ: Սա կօգնի զարգացնել քննադատական մտածողությունը: Էսսեկամշարադրությունգրել:Էսսեիտնային աշխատանքը թույլ կտա աշակերտներին զարգացնել գրելու և փաստարկելու հմտությունները և խորացնել իրենց ըմբռնումը թեմայի վերաբերյալ: Հասկանալով ազգային մշակույթը և արժեքները. աշակերտները կսովորեն հարգել և գնահատել ազգային ժառանգությունն ու մշակութային արժեքները, քանի որ Հովհաննես Թումանյանը հայ գրականության և պատմության կարևոր գործիչ է: Սոցիոմշակութային իրավասության զարգացում. Աշակերտները կսովորեն հասկանալ գրականության և գրողների ազդեցությունը հասարակության և մշակույթի վրա, ինչը նպաստում է սոցիոմշակութային իրավասության զարգացմանը: Դասի արդյունքում աշակերտներն ավելի կտեղեկանան Հովհաննես Թումանյանի աշխատանքին ու նշանակությանը, կզարգացնեն նաև տեղեկատվության վերլուծության, գրելու, խմբային աշխատանքի և քննադատական մտածողությանհմտություններ:

Հիմնականբովանդակությունը

Եզրակացություններ,առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտականհարցին	Գրողիկենսագրությանդասավանդումըգրական կրթությանկարևորասպեկտ է: Սաոչմիայնաշակերտներին հայտնիգրականգործիչներիկյանքինուստեղծագործությանը ծանոթացնելու, այլևուսումնականգործընթացնավելիհետաքրքիր և տեսողականդարձնելումիջոց է: Եզրափակելով, գրողիկենսագրությանուսուցմանհիմնականասպեկտներըկարելի է ամփոփելհետևյալկերպ. ● Հասկանալ համատեքստը: : Աշակերտների ներգրավում. գրողի կենսագրության մասին սովորելը կարող է գրականության դասերն ավելի գրավիչ և տեղին դարձնել աշակերտների համար, քանի որ նրանք սովորում են կյանքի և պատմության մասին, որոնք կարող են կարևոր և հետաքրքիր լինել իրենց համար: ● Քննադատական մտածողությանզարգացում: Գրողի կենսագրության վերլուծությունը օգնում է շակերտներին զարգացնել տեղեկատվության քննադատական գնահատմանևմեկնաբանմանհմտությունները: ● Սոցիոմշակութային կրթություն: Գրողի կենսագրության ուսուցումը նպաստում է աշակերտների սոցիալ-մշակութային կարողությունների զարգացմանը՝ օգնելով նրանց ավելի լավ հասկանալ

	մշակութային ժառանգությունը և դրա նշանակությունը: • Անձնական զարգացում. ականավոր անհատների, օրինակ՝ գրողների կյանքն ու ստեղծագործությունները ուսումնասիրելը կարող է ոգեշնչել աշակերտներին անձնապես զարգանալ և բացահայտել իրենց հետաքրքրություններն ու կրքերը: • Հարգանք գրականության և արվեստի նկատմամբ: Գրողի կենսագրության ուսուցումը նպաստում է գրականության և արվեստի նկատմամբ հարգանքին և հասարակության մեջ նրանց դերի ըմբռնմանը: Ընդհանուր առմամբ, գրողի կենսագրության ուսումնասիրությունը հարստացնում է աշակերտների գրական կրթությունը և նպաստում նրանց զարգացմանը՝ որպես ինտելեկտուալ զարգացած և կրթված քաղաքացիներ:
Այլտեղեկատվություն	

Օգտագործվածգրականությանցանկ

1. Թամրազյան Հ., ՀովհաննեսԹումանյան, Բանաստեղծը և մտածողը, Երևան, 1995
2. Ինճիկյան Ա., ՀովհաննեսԹումանյան, Երևան, 1969
3. Հախվերդյան Լ., Թումանյանիաշխարհը» Երևան, 1966
4. Մկրյան Մ., ՀովհաննեսԹումանյանիստեղծագործությունը, Երևան, 1981
5. Ջրբաշյան Է., Թումանյան. ստեղծագործականպրոբլեմներ, Երևան, 1988
6. Ջրբաշյան Է., Թումանյանիպոեմները, Երևան, 1964
7. Ջրբաշյան Է., Չորսգագաթ, Երևան, 1966
8. Թումանյան Մ., Իմիիշողությունները, Երևան, 2003
9. Թումանյան Ն., Հուշերուզրույցներ, Երևան, 1987

Հավելվածներ

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԴԱՍԻ ՊԼԱՆ-ԿՈՆՍՊԵԿՏ

Առարկա՝ Գրականություն
Դասարան՝ 8-րդ
Դասի թեման՝ Հովհաննես Թումանյանի կյանքը և ստեղծագործությունը

:

Դասինպատակները՝

- Սովորեցնելգնահատելինքնիրեն և շրջապատողմարդկանց
- Դաստիարակելսեր և հարգալիցվերաբերմունքազգային մշակույթինկտմամբ

Դասիխնդիրները՝

- Նպաստե՛լերեխաներիմեջայնպիսիորակներիզարգացմանը, ինչպիսիքեն՝ բարությունը, մարդասիրությունը, կարեկցանքը, փոխօգնությունը:
- Ձևավորե՛լխմբումաշխատելուկարողությունները

Ակնկալվողարդյունքները՝

- Երեխաներըկիմանան հայ մեծ գրող Հ.Թումանյանի կենսագրությունը

Հավելվածներ

- Կհասկանանմարդկայինփոխհարաբերություններիդերը և թեինչպես է իրենցվերաբերմունքըազդումուրիշներիվրա

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

ՔԱՅԼ 1. **Մեթոդական հնարի կիրառում՝** «Մտագրոհ»

Գրատախտակին գրում ենք Հովհաննես Թումանյանի անունը, իսկ նրա շուրջ երեխաների ասած բառերը:

Անուշ

բանաստեղծՔաջ Նազար



Կացին ախպերԹմբկաբերդի առում

Գիքորը

Իմաստի ընկալման փուլ

Նոր նյութի հաղորդման ժամանակ տեսասասահիկի միջոցով ներկայացնում ենք՝ `

1. Մանկություն և պատանություն Հովհաննես Թումանյանի ծնունդն ու վաղ կյանքը: Ընտանեկան նախապատմություն և մանկության միջավայր. Սովորում և հետաքրքրություններ վաղ կյանքի ընթացքում:

2. Ստեղծագործական ուղի Առաջին բանաստեղծական քայլերը: Նրա ստեղծագործությունների հիմնական թեմաներն ու մոտիվները: Թումանյանի դերը հայ գրականության զարգացման գործում:

3. Հայտնի ստեղծագործություններ «Անուշ» և դրա իմաստը, «Թմբկաբերդիառումը» և այլ հայտնի բանաստեղծություններ: Նրանց ազդեցությունը հայ և

Հավելվածներ

համաշխարհային գրականության վրա:

4. Հասարակական գործունեություն : Թումանյանի մասնակցությունը Հայաստանի հասարակական կյանքին:Նրա գործունեության նշանակությունը ժողովրդի համար:

5. Ազդեցությունը մշակույթի վրա

Ի՞նչ արժեքներ և գաղափարներ է քարոզել Թումանյանը:

Նրա ստեղծագործությունների ազդեցությունը հայ մշակույթի և գրականության վրա:

Կշռադատման փուլում կիրառում ենք ԳՈՒՍ մեթոդը: Դասարանը բաժանվում է 4 խմբի և յուրաքանչյուր խումբ քննարկում է և դասարանին է ներկայացնում իր տարբերակները:

Գիտեմ	**Ուզում եմ իմանալ**
Սովորեցի	

Հավելվածներ

Ամփոփում

Հովհաննես Թումանյանի ստեղծագործության պահպանման և առաջմղմանկարևորության քննարկում.

Տնային առաջադրանք:

Աշակերտներին հանձնարարվում է գրել կարճ շարադրություն կամ շարադրություն՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ստեղծագործության կարևորությանը հայ մշակույթի և գրականության համար: